ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արարատի մարզում <<Ընդդեմ գենդերային բռնության 2013 թվականի միջոցառումների ծրագրի>> շրջանակներում կատարված աշխատանքների մասին

| h/ h | Միջոցառման անվանումը | Կատարված աշխատանքը | Ֆինանսավորման աղբյուրը |
|---|---|---|---|
| 1. | <<Ընդդեմ գենդերային բռնության>> ազգային ծրագրի իրականացման լուսաբանման աշխատանքների իրականացում | Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի, գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի կողմից մշակվել է շրջաբերական՝ համագործակցության առաջարկով, ուղարկվել է այն ՀԿ-ներին, ովքեր զբաղվում են մարզում կանանց հիմախնդիրներով: Բաժնում հրավիրվել է սեմինար-խորհրդակցություն՝ ՀԿ-ների մասնակցությամբ: | Ֆինանսավորում չի պահանջվել |
| 2. | Գենդերային բռնության կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացում | Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի, գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի, ոստի-կանության հետ համատեղ իրականացվել են տարբեր միջոցառումներ՝ գենդերային բռնության երևույթների հայտնաբերման, կանխարգելման նպատակով:Տարվա ընթացքում հայտնաբերվել են գենդերային բռնության 8 դեպք. որից 3-ը ուղղորդվել է կանանց աջակցության կենտրոն, իսկ 6-ը՝ | Ֆինանսավորում չի պահանջվել |

| | | | |
|---|---|---|---|
| | | ոստիկանության և ԸԿևԵԻՊԲ-ի աշխատակիցների աշխատանքի շնորհիվ հարթվել է: | |
| 3, | Գենդերային բռնության դեմ ուղղված հատուկ ակցիաների իրականացում | ԸԿևԵԻՊԲ-ի,գենդերային մշտա-կան հանձնաժողովի, ոստիկա-նության հետ համատեղ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին մարզային 10 կառույցներում իրականացվել են տարբեր միջոցառումներ,սեմինար-ներ՝ գենդերային կարծրատիպերի հաղթահարման նպատակով: | Ֆինանսավորում չի պահանջվել |
| 4. | Մարզի հանրակրթական դպրոցներում <<Առողջ ապրելակերպ>> դասընթացի անցկացման մասին հետազոտության իրականացում: | ԸԿևԵԻՊԲ-ի գենդերային մշտա-կան հանձնաժողովի հետ համատեղ տարվա ընթացքում հանդիպումներ են կազմակերպել հանրակրթական դպրոցների <<Առողջ ապրելակերպ>> առար-կայի ուսուցիչների հետ, որոնք ներկայացրել են առարկայի դասավանդման կարևորությունը, դրական և բացասական կողմերը, կազմակերպվել են բաց դասեր, դաս-միջոցառումներ,որին ներկա են եղել բաժնի աշխատակիցները. գենդերային հարցերով մշտական հանձնաժողովի անդամներ: Դեկտեմբեր ամսին բաժնում կատարվել է արդյունքների ամփոփում | Ֆինանսավորում չի պահանջվել |
| 5, | Գենդերային բռնության երևույթի լուսաբանման աշխատանքների իրականացում | Տարվա ընթացքում կազմա-կերպվել են սեմինարներ,կլոր սեղաններ՝ գենդերային երևույթի աշխատանքների իրականացման նպտակով: | Ֆինանսավորում չի պահանջվել |